

Անհապաղ թողարկման համար
12-ը սեպտեմբերի, 2012թ.

Պատասխանատու՝ Արման Մելքոնյան
ՀՌԿԿ-Հայաստանի ծրագրերի ղեկավար
Էլ.-փոստ՝ arman.melkonyan@crcc.am, հեռ.՝ 581330, 581450

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները հրապարակեցին ընտրանքային հարցման ութերորդ շրջափուլի հիմնական արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – 2012թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 11-ին, «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագրի հայաստանյան կենտրոնի տնօրեն Հեղինե Մանասյանը ներկայացրեց 2011 թվականի աշնանը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի շուրջ 6000 տնային տնտեսություններում իրականացված Կովկասյան բարոմետրի՝ 2004 թվականից ի վեր միասնական մեթոդաբանությամբ միաժամանակ իրականացվող ամենամյա ընտրանքային հետազոտության որոշ արդյունքներ:

Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը, ողջունելով մասնակիցներին, բարձր գնահատեց ԵՊՀ-ում գործող ՀՌԿԿ-Հայաստանի նման ծրագրերի դերը, որոնք հավաքագրելով արժեքավոր տվյալներ, օգնում են բացահայտելու տարածաշրջանում և երկրում առկա զարգացումների հանրային ընկալումները:

2011թ. հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ հարավկովկասյան երկրներում հանրությանը շարունակել են առավել հուզել տնտեսական խնդիրները. Հայաստանում հարցվածները, որպես ամենակարևոր խնդիր, առավել հաճախ նշել են գործազրկությունը (44%՝ 2009թ. 32%-ի դիմաց) և աղքատությունը (16%՝ 2009թ. 12%-ի դիմաց): Ադրբեջանում հարցվածները գերակա են համարել տարածքային ամբողջականության (31%՝ 2010թ. 53%-ի դիմաց) և հետո միայն գործազրկության (28%) հիմնախնդիրները: Վրաստանում գործազրկությունը մատնանշել են պատասխանողների 55%-ը, իսկ տարածքային ամբողջականությունը՝ 12%-ը:

Հարավկովկասյան երկրներում ընդգծված են մնում միգրացիոն տրամադրությունները. հնարավորության դեպքում այլ վայրում մշտապես բնակվելու կմեկնեին 2011թ. Հայաստանում հարցվածների 25, ադրբեջանցիների՝ 16 և վրաստանցիների՝ 11%-ը: Ժամանակավորապես մեկնելու հնարավորությունը կօգտագործեին հայաստանցիների 57, ադրբեջանցիների՝ 47 և վրաստանցիների՝ 45%-ը:

2011թ. հարցաթերթում միայն Հայաստանում և Ադրբեջանում հղված հարցաշարով բացահայտվել է նաև հանրության կարծիքը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղիների մասին: Այն հարցին, թե երբ կլուծվի ԼՂ խնդիրը, “երբեք” կամ “չգիտեմ” են պատասխանել Հայաստանում հարցվածների 62, իսկ Ադրբեջանում հարցվածների 44%-ը: Միաժամանակ, Հայաստանում հարցվածների 62%-ը շատ հնարավոր կամ ավելի շուտ հնարավոր է համարել խնդրի լուծումը խաղաղ ճանապարհով: Այդ կարծիքը կիսել են Ադրբեջանում հարցվածների 52%-ը, մինչդեռ 42%-ը հավանական են համարել խնդրի լուծումը պատերազմի միջոցով:

Տարածաշրջանում առկա սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնախնդիրների թնջուկի համատեքստում, թերևս դրական կարող է համարվել այն փաստը, որ կյանքից ընդհանուր բավարարվածության միջին մակարդակը Հայաստանում և Ադրբեջանում գնահատվել է հավասար՝ 5.1 բալ (10 բալանոց սանդղակով): Վրաստանում այն ավելի բարձր՝ 5.6 բալ է եղել: Հետաքրքիր է, որ երջանկության միջին մակարդակը Հայաստանում կազմել է 6.6 բալ, Ադրբեջանում՝ 6.1, իսկ Վրաստանում՝ 6.9 բալ: Հայաստանում երջանկության ամենացածր մակարդակը՝ 4.8 բալ, գրանցվել է ամուսնալուծվածների շրջանում:

Հարցման արդյունքում հավաքագրված տվյալադրանքների վերլուծությամբ կարելի է բազմաթիվ այլ բացահայտումներ անել տարածաշրջանի երկրներում սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումների վերաբերյալ:

ՀՌԿԿ հավաքագրած տվյալների բազաները և հարակից փաստաթղթերը ազատորեն հասանելի են www.crcc.am և www.crrccenters.org կայքերում:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Այու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների համագործակցությամբ (Հայաստանի պարագայում՝ Երևանի պետական համալսարանի) գործող ծրագիրը առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: Հայաստանում ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմե՛ք:

ՀՌԿԿ-Հայաստան. Երևան 0025, Արվոյան 52, 3-րդ հարկ, հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50, Էլ. փոստ՝ crcc@crcc.am, վեբ-կայք՝ www.crcc.am: Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելե՛ք www.crrccenters.org: